

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 08

«Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ

19.05.2015թ. գիտական խորհրդի նիստի

Նախագահ՝ Վ. Գրիգորյան

Քարտուղար՝ Թ. Խաչատրյան

Գիտական խորհրդի 58 (հիսունութ) անդամից ներկա էին 48-ը (քառասունութ):

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Ռազմավարական պլանավորման հիմնահարցերի հանձնաժողովի 2015թ.-ի I եռամսյակի կատարողականի հաշվետվություն:

Հաղ.՝ Ռազմավարական պլանավորման

հիմնահարցերի հանձնաժողովի նախագահ Ս. Սարգսյան

2. «Էլեկտրոնային դասընթաց»-ի վերապատրաստմանը մասնակցած ԳՊՄԻ-ի աշխատակցի (ամբիոնի դասախոսի/լաբորանտի) կողմից ընտրած 1 առարկայի էլեկտրոնային դասընթացի պատրաստման համար ԳՊՄԻ-ի ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վերապատրաստող մասնագետի անհատական խորհրդատվության անցկացման ժամաքանակ սահմանելու մասին:

Հաղ.՝ Գիտության և արտաքին կապերի գծով

պրոռեկտոր Ա. Ֆարմանյան

3. Ընթացիկ հարց:

Ծննդյան 60-ամյակի առթիվ ԳՊՄԻ-ի ռեկտոր Վ. Գրիգորյանի հաղորդումը Գյումրու «Պրոգրես» համալսարանի ռեկտոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռաֆիկ Զարգանդի Խաչատրյանին «ԳՊՄԻ-ի ոսկե հուշամեդալով» պարգևատրելու մասին:

Հաղ.՝ ռեկտոր Վ. Գրիգորյան

Ռեկտոր Վ. Գրիգորյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 48 անդամ. կողմ՝ 48, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

1.ԼՍԵՑԻՆ.- Ռազմավարական պլանավորման հիմնահարցերի հանձնաժողովի 2015թ.-ի I եռամսյակի կատարողականի հաշվետվությունը:

Ռազմավարական պլանավորման հիմնահարցերի հանձնաժողովի նախագահ Ս. Սարգսյանը ներկայացրեց իրականացված աշխատանքների բնույթը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Կենսաբանության, բնապահպանության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի վարիչ Ա. Գրիգորյանը, Ֆրանսերեն, գերմաներեն լեզուների և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի վարիչ Ս. Ստեփանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Տեղեկատվությունն ընդունելի գիտություն:

2.ԼՍԵՑԻՆ.- Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյանի հաղորդումը «Էլեկտրոնային դասընթաց»-ի վերապատրաստմանը մասնակցած ԳՊՄԻ-ի աշխատակցի (ամբիոնի դասախոսի/լաբորանտի) կողմից ընտրած 1 առարկայի էլեկտրոնային դասընթացի պատրաստման համար ԳՊՄԻ-ի ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վերապատրաստող մասնագետի անհատական խորհրդատվության անցկացման ժամաքանակ սահմանելու մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ.- «Էլեկտրոնային դասընթաց»-ի վերապատրաստմանը մասնակցած ԳՊՄԻ-ի աշխատակցի (ամբիոնի դասախոսի կամ լաբորանտի) կողմից ընտրած 1 առարկայի էլեկտրոնային դասընթացի պատրաստման համար սահմանել 4-ժամյա /140 րոպե/ ընդհանուր տևողությամբ անհատական խորհրդատվություն /1 ժամի վարձատրման չափը տե՛ս 19.02.2015թ. գիտական խորհրդի թիվ 07 արձանագրությունում/ ԳՊՄԻ-ի ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վերապատրաստող մասնագետի հետ:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 48 անդամ. կողմ՝ 48, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

3.ԼՍԵՑԻՆ.- Ընթացիկ հարց:

3.1 ԼՍԵՑԻՆ.- Ծննդյան 60-ամյակի առթիվ ԳՊՄԻ-ի ռեկտոր Վ. Գրիգորյանի հաղորդումը Գյումրու «Պրոգրես» համալսարանի ռեկտոր,

փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռաֆիկ
Զարգանդի Խաչատրյանին «ԳՊՄԻ-ի ոսկե հուշամեդալով»
պարգևատրելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր
Ս. Ալեքսանյանը, ընդհանուր հարցերի գծով պրոռեկտոր
Ս. Սողոյանը, պատմաբանասիրական ֆակուլտետի դեկան
Ս. Հայրապետյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Ծննդյան 60-ամյակի առթիվ ու Գյումրու «Պրոգրես» համալսարանի
կայացման գործում ներդրած նշանակալի ավանդի համար ռեկտոր,
փ.գ.դ., պրոֆեսոր Ռաֆիկ Զարգանդի Խաչատրյանին պարգևատրել
«ԳՊՄԻ-ի ոսկե հուշամեդալով»:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 48 անդամ. կողմ՝ 48, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Թ. ԽԱՉԱՏՐՅԱՆ